

Ինչ վերաբերում է ՖԱԽ-ի գործունեության դադարեցման իրավական և տնտեսական հետևանքներին, ապա դրանք արդեն իսկ կարգավորված են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և կկիրառվեն նաև ՖԱԽ-երի լուծարման պարագայում, և այս առումով օրենսդրական նոր դրույթների ներմուծման անհրաժեշտություն, կարծում ենք, չի առաջանա:

Առաջարկվող մոտեցումներն, իհարկե, սպառնիչ չեն կարող լինել և նպատակ ունեն ընդամենն ուրվագծել օրենսդրական կարգավորման այն հիմնական շրջանակը, որն անհրաժեշտ է ամրագրել ՖԱԽ-երի ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները քաղաքակիրթ և նպատակային կարգավորելու տեսանկյունից:

ԻՐԻՆԱ ՏԱՐԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ԴԱՎԻԹ ՇԱՄՇՅԱՆ

ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

«Երևան ջուր» ՓԲԸ երկարաժամկետ վարձակալության պայմանագիրը մասնակի ներդրումային պարտավորություններով կարելի է դասել մասնավոր ընկերության մասնակցության խառը մոդելին: Պայմանագրի կառուցվածքն այնպիսին է, որ թույլ է տալիս հաշվի առնել այն առավելությունները, որոնք կարող էր տալ օրենսդրորեն ձևակերպված պետության և մասնավոր հատվածի միջև կոնցեսիոն հարաբերությունների համակարգը: Ի տարբերություն վարձակալության ստանդարտ մոդելի, երբ վարձատուն (պետությունը կամ քաղաքային ինքնավարության մարմինը) իր վրա է վերցնում ամբողջությամբ նոր ներդրումներ իրականացնելու և ֆինանսավորելու պատասխանատվությունը՝ տվյալ մոդելում մասնավոր ընկերությանը փոխանցված է սահմանափակ ներդրումներ կատարելու պատասխանատվություն: Ընկերության հիմնական պարտավորություններն են՝

- տեխնիկական կառավարումը, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման (ՋնՋ) կառույցների շահագործումը, սարքավորումների՝ տրանսպորտային միջոցների, շինարարական մեքենաների, տեղեկատվական մեքենաների, տեղեկատվա-գրաֆիկական համակարգերի, հոսակորուստների հայտնաբերման նյութերի ձեռքբերումը 6.4 մլն եվրոյի չափով,
- առևտրային հարցերի կառավարումը,
- պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքային ծրագրի (ՊՎԸԱԾ) իրականացումը 8.87 մլրդ դրամի չափով պայմանագրի գործողության ամբողջ ժամանակաընթացքում,
- վարձակալության վճարի վճարումը,
- հաշվետվության ներկայացումը պայմանագրի պահանջների համաձայն:

Ինչպես տեսնում ենք, ընկերության առջև դրված են համակարգի հիմնական ֆոնդերի պահպանման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման, այլ ոչ թե ենթակառուցվածքի

զարգացման և արդիականացման հիմնախնդիրները:

Գոյություն ունի ընկերության ներդրումների մոտավոր պլան առաջիկա 5 տարիների համար՝ կապված Համաշխարհային բանկի վարկի հետ, որի հիման վրա օպերատորը կազմում է իր տարեկան ներդրումային պլանները: ՀԲ 18.75 մլն ԱՄՆ դոլար գումարը ներառված է վարձակալության պայմանագրում՝ որպես Երևանի ՋԼՋ Ներդրումների ինդիկատիվ ծրագրի հիմնադրամ, որը պետք է օգտագործի վարձակալը կապիտալ ներդրումների համար: Այդ հիմնադրամը ֆինանսավորվում է մի մասով նաև ՀՀ կառավարության կողմից: Այդ ֆոնդից ֆինանսավորվող հիմնական ներդրումները վերաբերում են՝

- էներգախնայողությանը- 10.5 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 5 մլն ԱՄՆ դոլար բաշխիչ ցանցերի վերակառուցման և 5 մլն ԱՄՆ դոլար մնացած ջրաբաշխիչ համակարգերի սեզոնատավորման համար,
- ջրամատակարարման հուսալիության բարձրացմանը և գործառնությունների վերահսկմանը՝ 6.75 մլն ԱՄՆ դոլար,
- շրջակա միջավայրի աղտոտման կրճատմանը՝ 1.5 մլն ԱՄՆ դոլար:

Երևանի ՋԼՋ ծրագրի նպատակն է իրականացնել բոլոր հիմնական պահանջվող ներդրումները:

Մայրաքաղաքի ՋԼՋ համակարգում ընկերության կողմից 2006-2010թթ. ընթացքում ՀԲ վարկից կատարված ներդրումները կազմել են 12 մլն ԱՄՆ դոլար, իսկ սեփական միջոցներից՝ 5 մլրդ դրամ¹: Շնորհիվ իրականացված ներդրումների՝ ընկերությունը կարողացել է արձանագրել լուրջ առաջընթաց տարբեր ծրագրերի իրականացման ուղղությամբ: Նշենք, որ 2016թ. իտալական և ֆրանսիական օպերատորների ներդրումները համակարգում կկազմեն 57.5 մլն ԱՄՆ դոլար²: Ակնհայտ է, որ այդպիսի ներդրումների շրջանակներում հնարավոր չէ վերականգնել և արդիականացնել մայրաքաղաքի մաշված ՋԼՋ համակարգերը: Ըստ մասնագետների՝ համակարգերն ամբողջովին վերականգնելու համար անհրաժեշտ է մոտ 600-800 մլն ԱՄՆ դոլար³:

Այսինքն, համակարգի լիարժեք, արդյունավետ զարգացումը պահանջում է խոշոր ներդրումների ներգրավում, որոնք կարող են փոխհատուցվել տասնամյակների ընթացքում: ՋԼՋ համակարգի ներդրումային գրավչության բարձրացման համար ընկերությանը և ներդրողին պետք է տրվեն հստակ և ոչ երկիմաստ օրենսդրական երաշխիքներ, որ կատարված ներդրումները ոչ միայն կփոխհատուցվեն, այլև կապահովեն որոշակի շահույթ: Ընդ որում, ընկերության սեփական և փոխառու ներդրված միջոցներից ստացված եկամուտը պետք է համադրելի լինի ռիսկերի հետ, որը նա կրում է՝ կատարելով ներդրումներ մենաշնորհային գործունեության մեջ: Նման օրենսդրական երաշխիքներ հնարավոր է ապահովել վարձակալության պայմանագրից գույքի կառավարման առավել կատարելագործված և ճկուն ձևի՝ կոնցեսիոն պայմանագրի անցման դեպքում: Կոնցեսիոն պայմանագիրն այն հիմքն է, որի վրա կառուցվում է պետության և մասնավոր հատվածի համագործակցությունը (ՊՄՀ) կոնցեսիայի հիման վրա ներդրումային նախագծեր իրականացնելիս: Կոնցեսիոն մեխանիզմի ներդրման համար հանրապետությունում պետք է ստեղծվեն համապատասխան օրենսդրական, ինստիտուցիոնալ և կազմակերպչական պայմաններ:

ՋԼՋ ոլորտում կոնցեսիոն հարաբերությունների առանձնահատկությունն այն է, որ այստեղ առաջնային նշանակություն է ձեռք բերում մասնավոր ընկերության գործունեության

¹ /arka.am/rus/finance/2010/05/25/20037.html.

² <http://www.168.am/am/articles/3451-pr>.

³ <http://www.ecolor.org/hy/news/2010-06-10/1068/>.

սոցիալական ուղղվածությունը: Այդ գործառույթների փոխանցումն ընկերությանը, անպատճառ, ռիսկեր է պարունակում պետության համար, որոնց թվին, մասնավորապես, կարելի է դասել սակագների անվերահսկելի աճի, պետական ակտիվների նկատմամբ վերահսկողության կորստի, մասնավոր ընկերության ընտրության և նրա արդյունավետության աստիճանի գնահատման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների մի մասը չկատարելու ռիսկը:

Օրենսդրության բացակայության դեպքում ընկերությունը նույնպես կարող է բախվել բազմաթիվ ռիսկերի հետ, օրինակ՝ սակագների կարգավորման, լիցենզիա չստանալու կամ ժամանակին չստանալու, անշարժ գույքի օբյեկտի նկատմամբ իրավունքի ձևակերպման, շինարարությունը ժամանակին չթույլատրելու հետ և այլն:

Այդ առումով խիստ կարևոր նշանակություն ունի պետության և ընկերության միջև իրավական հարաբերությունների ճիշտ ձևակերպումը, որը կապահովի շահերի հաշվեկշիռը և համագործակցության հստակ կազմակերպումը նախագծի իրականացման շրջանակներում: Միայն լիարժեք կոնցեսիոն օրենսդրության կիրառմամբ ընկերությունը կարող է հենվել կայուն իրավական ռեժիմի վրա, որը նրան կապահովի ոչ թե ժամանակավոր արտոնություններով, այլ անհրաժեշտ երկարատև երաշխիքներով՝ ներդրված միջոցները փոխհատուցելու համար:

Համապատասխան պայմանագրում ներդրողը ոչ միայն կամրագրի լուրջ բանակցությունների ընթացքում ձեռքբերված և իրեն ձեռնտու կոմերցիոն պայմաններ, այլև կերաշխավորի այդ պայմանների կայուն պահպանումը ողջ ժամկետի ընթացքում: Խաղի կանոնները պետք է լինեն այնպիսին, որ պետությունը հնարավորություն ունենա ձեռնարկելու իրեն և ներդրողին պաշտպանելու միջոցառումներ՝ չստեղծելով դրա հետ մեկտեղ բարդություններ նախագծի իրականացման համար:

Այսօր կոնցեսիոն հարաբերությունները կարգավորող օրենքներ ընդունված են ՌԴ-ում (2005թ.), Ուկրաինայում (1999թ.), Թուրքմենստանում (1993թ.), Լիտվայում, Վրաստանում, Մոլդովայում (1996թ.), Ուզբեկստանում (2000թ.), Դոմինիկյան Հանրապետությունում (1992թ.), Գաբոնում (1998թ.), Բուլղարիայում (1997թ.), Խորվաթիայում (1992թ.) և մի շարք այլ երկրներում, այնուամենայնիվ այդ ոլորտում օրենսդրական բազան թույլ է զարգացած, և դրանց կիրառման դրական փորձը դեռ չի ձևավորվել: Ներկայումս հանրապետությունում ՊՄՀ օրենսդրական կարգավորման հիմնական իրավական ակտն է 2002 թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու մասին» ՀՀ օրենքը, որը հնարավորություն չի տալիս լիարժեք գործարկել ՊՄՀ մեխանիզմը նույնիսկ սեփական կարգավորման ոլորտում: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել ջրամատակարարման ոլորտը կարգավորող օրենք կոնցեսիայի մասին, որի նորմերը պետք է հաշվի առնեն ոլորտի առանձնահատկությունները: Դյուդի առանձնահատկությունը պահանջում է, որպեսզի կոնցեսիայի առարկա դառնան ոչ միայն անշարժ օբյեկտները, այլև սպառողներին ծառայություններ տրամադրող հասարակական գործունեության ձևերը:

Օրենսդրական նորմերի շրջանակներում անհրաժեշտ է լուծել ոչ միայն ենթակառուցվածքի արդիականացման խնդիրները, այլև նվազեցնել ռիսկերի հնարավոր աճը, որոնք մեր երկրում, ի տարբերություն զարգացած երկրների, դժվար է կանխատեսել, հաշվարկել և վերահսկել: Կոնցեսիայի դեպքում, քանի որ ընկերությունը պատասխանատվություն է կրելու հիմնական ֆոնդերի արդիականացման և ցանցերի ընդլայնման համար, ռիսկերը բարձր և ավելի բարդ բնույթի կլինեն՝ կապված ընկերության վարձատրության հետ, որը հիմնված է

սպառողների վարձավճարների վրա: Ռիսկերի ճիշտ բաշխումը պետության և մասնավոր ընկերության միջև այն հենքն է, որի վրա կառուցվում է ՊՄՀ ցանկացած նախագծի իրականացումը: Քանի որ ռիսկերի բաշխումը պահանջում է փոխհատուցում (պարգևատրում), այն պետք է դիտարկվի ոչ թե որպես հասարակական գործառույթների անվճար փոխանցում պետությունից մասնավոր ընկերությանը, այլ ավելի շուտ ռիսկերի առավել օպտիմալ բաշխում գործընկերների միջև, որոնցից յուրաքանչյուրը կարող է ավելի լավ կառավարել (նվազեցնել և ապահովագրել) իր ռիսկը: Ակնհայտ է, որ ընկերությունը կարող է հաղթահարել առևտրային ռիսկերը, իսկ պետությունը՝ իրավական, նորմատիվային և քաղաքական: Առևտրային ռիսկերի շարք են դասվում շինարարության, շահագործման և սպասարկման ռիսկերը, որոնք սկզբունքորեն կարևոր նշանակություն են ձեռք բերում նախագիծն արտահանվելուց առաջին միջոցներով իրականացնելիս: Ընկերությունը տեղյակ է մնան ռիսկերի գոյության մասին և կարող է դրանք նվազեցնել, եթե նրան տան գործողությունների բավարար ազատություն իր գիտելիքների և տեխնոլոգիաների կիրառման համար ենթակառուցվածքի օբյեկտների կառուցման և շահագործման ժամանակ:

Առևտրային ռիսկերից առավել բարդ և կարևոր են պահանջարկի և շահութաբերության ռիսկերը: Պահանջարկի ռիսկը ընդգրկում է ընկերության գործունեության բոլոր կողմերը, ներառյալ գործառնական ցուցանիշները, շահագործումը և տեխսպասարկումը, ինչպես նաև նոր ներդրումների իրականացումը: Ապագա պահանջարկի վճարումնակության ստույգ կանխատեսման նշանակությունը զգալի է դառնում ընկերության ընդհանուր ծախսերում հաստատուն ծախսերի բարձր տեսակարար կշռի պատճառով: Իրոք, այդ դեպքում մույնիսկ իրացման ծավալների համեմատաբար փոքր նվազեցումը սպասվածից կարող է բերել հասույթի և շահույթի զգալի անկման: Պահանջարկի տատանումները կարող են նոր ներդրումները դարձնել չափից դուրս մեծ և ընդհակառակը, որն իր հերթին կփոխի նախագծի գրավչությունը: Հաշվի առնելով պահանջարկի տատանումների հավանական ներգործությունը գործարքի վրա՝ կարևոր է հանգամանորեն կշռադատել, թե ով է գտնվում լավագույն վիճակում, որպեսզի այդ ռիսկը վերցնի իր վրա (պետությունը, թե՞ մասնավոր ընկերությունը): Ջե.Ջ մասնավոր ընկերության մոտ են գտնվում սովորաբար տեխնիկական փորձագիտության տվյալները, որոնք անհրաժեշտ են պահանջարկի տատանումները ճշտորեն կանխագուշակելու համար: Ջե.Ջ ծառայությունների պահանջարկի վրա դժվար է ազդել: Միացումից հետո սպառողները կարող են օգտագործել այնքան ջուր, որքան ցանկանան (շատ կամ քիչ): Մինչդեռ սպառողի վարքի վրա կարելի է ազդել մատուցված ծառայությունների ծավալի չափման եղանակի, սակագների փոփոխման, օրենսդրորեն ձևավորված նորմավորման և գովազդային արշավների միջոցով՝ ուղղված ջրի կորուստների կրճատմանը: Ենթակառուցվածքը կառավարող ընկերությունը կարող է մեղմացնել հետևանքները՝ ճշգրտելով տեխսպասարկման և ներդրումային ծրագրերը:

Ջե.Ջ ոլորտում նախագծերը հատկապես ենթակա են արժութային ռիսկերի, քանի որ նախագծերի ֆինանսավորումը մեծ մասամբ իրականացվում է արտարժույթով, այն դեպքում, երբ եկամուտները, որպես կանոն, ստացվում են ազգային արժույթով: Քանի որ սովորաբար ֆինանսական միջոցները տրամադրվում են ձեռնարկությանը, որը գտնվում է քաղաքային ինքնավարության մարմնի ներքո, ապա առաջանում է վարկային ռիսկի հիմնախնդիր: Հաշվի առնելով արժութային ռիսկը՝ առավել նախընտրելի է, որ ձեռնարկությունը ֆինանսավորվի տեղական աղբյուրներից, ինչը հնարավոր կլինի կապիտալի տեղական շուկաների զարգացման դեպքում: Մինչդեռ ՀՀ-ում պատկերն այդ ոլորտում այլ է: Տեղական ֆինանսական հաստատություններից բանկերն արագ առաջընթաց են ապրում, սակայն դրանց գործունեու-

թյունը, որպես խոշոր ծրագրերում միջնորդներ, ավելի համեստ է: Անկայուն տնտեսության պայմաններում առևտրային բանկերը, գնահատելով ռիսկերը, բարձրացնում են տոկոսադրույքները՝ վարկային պորտֆելում արժևորելով իրացվելիությունը, խստացնում են պահանջները փոխառուների նկատմամբ և գրեթե առանց բացառության երաշխիքներ են պահանջում: Պետք է նշել, որ վերջին պահանջը հատկապես դժվար է կատարել ՊՄՀ ներդրումների դեպքում, երբ ենթակառուցվածքային շինությունները մնում են որպես պետական սեփականություն և հետևաբար չեն կարող օգտագործվել որպես երաշխիք: Հայաստանի ֆինանսական հատվածի «երկար փողեր» ստեղծող ինստիտուտները՝ ապահովագրական ընկերությունները, թոշակային, ներդրումային և փայատիրական ֆոնդերը, զարգացած չեն կամ էլ թույլ են զարգացած՝ ի տարբերություն զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների: Այսօր հանրապետությունում կուտակային թոշակային ֆոնդերի բացակայությունն ընդհանրապես աղավաղում է մեր ֆինանսական համակարգը, քանի որ հատկապես մեծ է թոշակային ֆոնդերի դերը «կարճ փողերը» «երկար փողերի» վերածելու մեջ և հետագայում դրանց տարածմանը ֆինանսական շուկայում բանկային համակարգի միջոցով: Երկրում շուկայական բարեփոխումների տարիների ընթացքում չհաջողվեց լիովին ձևավորել կայուն, հասարակության ժամանակակից պահանջներին համապատասխանող ապահովագրական ծառայությունների շուկա: Գործնականորեն բացակայում են փայատիրական ֆոնդերը: Քանի որ երկարաժամկետ ֆինանսավորման ներքին հնարավորությունները հանրապետությունում ներկայումս սահմանափակ են, ապա կարևոր նշանակություն է ձեռք բերում միջազգային ֆինանսական ինստիտուտների աջակցությունը: Ակնհայտ է, որ ֆինանսավորման այս տարբերակը արտարժույթի տատանումների պատճառով ենթակա է հավելյալ ռիսկերի, հատկապես, երբ որևէ ՊՄՀ ծրագիր իրականացվում է կոնցեսիոն հիմունքներով, և հաճախորդները ստացված ծառայությունների դիմաց վճարում են ազգային դրամով: Տվյալ պարագայում պետք է բանակցել միջազգային օժանդակող կառույցների հետ, որպեսզի վերջիններս բանկերին տրամադրեն արտոնյալ վարկեր՝ ՊՄՀ ծրագրերի ֆինանսավորման նպատակով: ՊՄՀ ծրագրերի փորձը ցույց է տալիս, որ ֆինանսական անկայունության ժամանակ (ինչը հավանական է, որ տեղի կունենա մի քանի տասնամյակ տևողությամբ ծրագրերի դեպքում), արտարժույթային ռիսկերը կարող են վտանգել ծրագրերը: ՀՀ-ում ջրամատակարարման ոլորտում կոնսերվատիվ ֆոնդերի զարգացման հետ ջրամատակարարման ոլորտում, որպես նախագծերի երկարաժամկետ ֆինանսավորման ներգրավման հեռանկարային գործիք, մեր կարծիքով, կարող են դառնալ նաև ենթակառուցվածքային փոխառության արժեթղթերը: Դրանց թողարկումը թույլ կտա բավարարել պետության և մասնավոր հատվածի պահանջները ներդրումային ռեսուրսների մեջ, ինչպես նաև շուկային առաջարկել երկարաժամկետ և եկամտաբերությամբ աշխատող արժեթղթեր:

Ջրամատակարարման ոլորտին առավել բնորոշ ռիսկերից է բնակչության համար սակագների ընդունելության ռիսկը: Ակնհայտ է, որ սկզբնական փուլում ներդրումային ծրագրերը նախատեսում են եկամուտների աղբյուրներ, որոնցից պետք է մարվեն կատարված կապիտալ ներդրումները: Կարևոր աղբյուր են սպառողների վճարները, հետևաբար ընկերությունը կձգտի բարձրացնել մատուցված ծառայությունների սակագները: Այս երևույթի դրական կողմն այն է, որ, որպես բիզնեսի ներկայացուցիչ, շահագրգռված լինելով շահույթ ստանալու մեջ, ընկերությունը կնպաստի սակագնի կառուցվածքում ծախսերի և շահույթի հարաբերակցության նվազեցմանը ծախսերի կրճատման ուղղությամբ՝ օգտագործելով ռեսուրսները խնայող տեխնոլոգիաներ, արդիականացնելով արտադրությունը: Սակայն պետության համար սկզբունքորեն կարևոր է թույլ չտալ սակագների չափից դուրս աճ՝ հատ-

կապես հաշվի առնելով այդ հիմնախնդրի քաղաքական նրբանկատությունը: Սովորաբար, ընտրությունների նախաշեմին բնակչության համար սահմանված ջրի սակագները չեն վերանայվում: Եվ դա բնական է, քանի որ սակագների աճը կարող է բնակչության մեջ դժգոհություններ առաջացնել, որից օգտվում է ընդդիմությունը՝ նախընտրական արշավի ժամանակ ընտրագանգվածի նախապատվությունները փոխելու համար: Դրա վառ ապացույցն է հանրապետությունում 2007 թ. ջրի սակագնի բարձրացման (172.8 դրամից մինչև 181 դրամ) տեղափոխումը 2009 թ., քանի որ 2008թ. նախագահական ընտրություններն էին: Ջարգացած սակագնային կարգավորման համակարգի օգնությամբ պետությունը կարող է վերահսկել ցանկացած սակագնային բարձրացում, որի արդյունքում հարկ չի լինի դա ամրագրել պայմանագրում:

Հանրապետությունում գոյություն ունեցող սակագնային կարգավորման համակարգն այն առանցքային գործոնն է, որը որոշում է ընկերության ներդրումների ինչպես եկամտաբերությունը, այնպես էլ ռիսկայնությունը: Ընկերության եկամտի չափը և կայունությունը շատ դեպքերում որոշվում են սակագների հաստատման գործընթացով:

Ներկայումս ՀՀ սակագների կարգավորման համակարգի դրական կողմերն են՝

- միասնական պետական բազմաճյուղային կարգավորող մարմինը՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ),
- 2004-2005թթ. ընդունված իրավական հիմքերը, որոնք անհրաժեշտ են ՁևՁ սակագների կարգավորման համար (մասնավորապես սակագների հաշվարկման և վերանայման գործընթացի մեթոդը),
- միասնական սակագները ջրմուղ-կոյուղու տնտեսության մեկ ձեռնարկության կողմից սպասարկվող սպառողների բոլոր խմբերի համար,
- գնագոյացման մեթոդի ճկունությունը – կոմունալ ձեռնարկությունը կարող է առաջարկել գնագոյացման նոր մեթոդներ և սակագների նոր կառուցվածք,
- տնային տնտեսությունների համար ջրօգտագործման նորմերի բացակայությունը. 2005թ. հուլիսի 1-ից սակագների հաշվարկման համար հիմնականում կիրառվում են օգտագործված ջրի և արտանետված կեղտաջրերի փաստացի ծավալները, որոնք հաշվառվում են ջրաչափական սարքերով:

Պետության տեսանկյունից սակագների սահմանման մեթոդաբանությունը կապված է բնակչության վճարունակության և ջրօգտագործողների ու հարկատուների միջև բեռի բաշխման քաղաքական որոշման հետ: Կառավարության կողմից սահմանված է սակագների վերանայման և հաստատման պարբերական գործընթաց: Սակագները կարող են վերանայվել յուրաքանչյուր տարի, ընդ որում վերանայման բանաձևը ներառված է միայն ջրամատակարարման համակարգերի օգտագործման թույլտվության մեջ, որը տրված է պայմանագրի ամբողջ ժամկետի համար, այլ ոչ թե պայմանագրի: Պայմանագիրն ընկերությանը հնարավորություն է տալիս վերանայել ջրի սակագինը, եթե հանրապետությունում փոփոխվում է էլեկտրաէներգիայի սակագինը, տեղի են ունենում սպառված ջրի ծավալների կրճատում, սղաճ և տարադրամի փոխարժեքի տատանումներ: Այդ 4 ցուցանիշները համաձայնեցված են կողմերի միջև այն հաշվով, որպեսզի փոխհատուցվի վարձակալի միջին ծախսերի աճը: Հարկ է նշել, որ սակագնի վերանայման բանաձևը հիմնված է ջրամատակարարման ծավալների վրա, այն հաշվի չի առնում ջրի կորուստները, ինչն իր քողարկված ազդեցությունն է թողնում սակագնի հաշվարկի ժամանակ: Քանի որ ջրի սակագնի վրա ազդում է ջրի կորուստների մեծությունը, մեր կարծիքով, անհրաժեշտ է ջրի կորուստները հաշվի առնել

սակագնի վերանայման բանաձևում: Ջրի կորստի հաշվառման նախընտրելի ցուցանիշ կարող է լինել խմ հոսակորուստ/օր/կմ խողովակ/ ցուցանիշը: Ցանկալի է նաև սակագնի վերանայման բանաձևը ներառնել պայմանագրի մեջ, ինչը թույլ կտա ընկերությանն ավելի լավ վերահսկել ռիսկերը՝ կապված բանաձևի վերանայման հետ: Սակագների վերանայման բանաձևի մոնիտորինգի համար պատասխանատու է ՀԾԿՀ-ը: Նշենք, որ սակագների առաջին վերանայումը տեղի է ունեցել 2007 թ.: Գործընթացն այդքան էլ հարթ չընթացավ, ինչպես որ սպասվում էր: Ընկերության և ՀԾԿՀ միջև առաջացան տարաձայնություններ ջրամատակարարման մանրամասն ծավալների շուրջ: 2007 թ. «Երևան ջուր» ՓԲԸ-ն առաջարկեց հանձնաժողովին վերանայել խմելու ջրի սակագինը, և այն 1խմ-ի դիմաց 172.8-ից դարձնել 185.9 դրամ: Հիշեցնենք, որ ընկերության մուտքը համակարգում արձանագրվել էր սակագնի 38 % աճով (125 դրամը 1 խմ ջրի համար դարձավ 172.8 դրամ): Սակագնի վերանայման պատճառներ են նշվել խոշոր բաժանորդների շրջանում ջրօգտագործման ծավալի 18%-ով կրճատումը, գնաճն ու ազգային արժույթի արժևորումը: Սակայն հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում պարզել էր, որ ընկերության կողմից ներկայացված ցուցանիշները չեն համապատասխանում իրականությանը: 2006 թ. ընկերությունը սպառել էր ոչ թե 55.1 մլն խմ, այլ 59.83 մլն խմ ջուր: Փաստորեն ընկերությունն իր առաջարկն ավելի հիմնավոր ներկայացնելու համար սպառման ծավալները 4.7 խմ-ով պակաս էր ներկայացրել: Հայտը բավարարվեց մասամբ: Առաջարկվող ավելի քան 9 դրամի փոխարեն հիմնավորված համարվեց միայն 3.6 դրամի բարձրացումը:

Կոնցեսիայի ներդրման ժամանակ ընկերությունը և նրան վարկավորողները ամեն կերպ կձգտեն օգտվել կոնկրետ իրավիճակներում լրացուցիչ ծախսերը սպառողների վրա դնելու հնարավորությունից: Այսօր արդեն վարձակալության պայմանագրի շրջանակներում «Երևան ջուր» ընկերությունը փորձում է դա անել: 2010 թ. նա հայտ ներկայացրեց խմելու ջրի սակագինը բարձրացնելու 181 դրամից մինչև 206.98 դրամ (25 դրամով կամ 14%-ով)՝ պատճառաբանելով, որ ջրի կորուստներից բացի մայրաքաղաքում ընկերությունը լայնածավալ շինարարական աշխատանքներ է իրականացնում՝ համայնքներում ներդնելով նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ, որոնք ձեռք են բերվում Եվրոպայից: Հանձնաժողովը որոշեց բարձրացնել 14 դրամով և սահմանել այն 195 դրամ, իսկ Երևանի քաղաքապետարանը 2010թ. նախատեսեց հատկացնել մոտ 340 մլն դրամ սուբսիդավորման համար: Պետք է նշել, որ ներդրումային պահանջների բավարարումը բացարձակապես սակագների աճի հաշվին անթույլատրելի է, քանի որ դա կարող է բերել սոցիալական լարվածության աճի հատկապես բնակչության կարիքավոր մասի մոտ:

ՋևՋ ոլորտում սակագների վերանայման առավելագույն հիմնավորվածության համար, հաշվի առնելով սպառողների վճարունակությունը և վճարելու պատրաստակամությունը, անհրաժեշտ ենք գտնում կատարելագործել կարգավորման գործընթացը հետևյալ ուղղություներով՝

- սակագների բարձրացման կամ խոշոր ներդրումային նախագծերի իրականացման նախաշեմին անցկացնել ՋևՋ ծառայությունների տնտեսական մատչելիության նպատակային ուսումնասիրություններ և հրապարակել արդյունքները: Դա կնպաստի իշխանական մարմինների սպառողների փաստացի վճարունակության և նրանց ավել վճարելու պատրաստակամության մասին տեղեկատվության ապահովմանը, ինչը կարելի է օգտագործել որպես փաստարկ սակագների վերանայման հիմնավորման և որոշումների ընդունման գործընթացի թափանցիկության օգտին: Միաժամանակ այդպիսի վերլուծության արդյունքները կծառայեն որպես տեղեկատվության անգնահատելի աղբյուր

սոցիալական միջոցառումների և սոցիալական օգնության տրամադրման չափանիշների մշակման ժամանակ: Նման գնահատականների արդյունքների հասարակայնորեն ներկայացումը կնպաստի բնակչության տեղեկատվության բարելավմանը, սպառողների կողմից ըմբռնման ուժեղացմանը,

- նպատակահարմար է ՁևՁ ոլորտում առաջարկվող ներդրումային ծրագրերի և առանձին խոշոր նախագծերի նախաձեռնողների առջև պահանջ դնել ներկայացնելու սակագների հաշվարկը, որոնք պետք է ձևավորվեն այդպիսի ծրագրերի և նախագծերի իրացման ժամանակ՝ բնակչության համար դրանց ֆինանսական մատչելիության հիմնավորմամբ: Այդ պահանջը կարող է դիտվել որպես ժամանակավոր՝ հանրապետությունում ՁևՁ համակարգերի վերականգնման և վերակառուցման նախագծերի ինտենսիվ ներդրման ժամանակաշրջանում,
- Ներդրումների նպատակով միջազգային փոխառություններից պետության կախվածությունը նվազեցնելու համար անցնել գնագոյացման համակարգի «հավելման» մեթոդին (ամորտիզացիայի ներառում սակագների հաշվարկի և պլանային շահույթի մեջ) ընկերության կողմից բնակչությանը դուրս գրված հաշիվների 90%-ից ավելի վարձավճարների գանձման ցուցանիշների ապահովման դեպքում,
- բաժանորդների տվյալների բազաների մշտական վերականգնման և ընկերության կողմից դրանց սպասարկման համար, ներառյալ միացումների և տեղադրված ջրաչափերի ճշտության ստուգումը, սահմանել սպասարկման արժեքնետային վարձ:

Հայաստանյան իրականության մեջ կոնցեսիոն մեխանիզմի իրականացման հիմնական խնդիրներից և մարտահրավերներից կարելի է նշել կողմերի, հատկապես պետական մարմիններում համագործակցության իրականացման ցանկության անբավարար մակարդակը և երկխոսության անպատրաստ լինելը, ինչպես նաև երկու կողմից վստահության բացակայությունը, նման մշակույթի բացակայությունը: Անձնակազմի վերապատրաստումը, տվյալների հետ փոխանակման համակարգի ստեղծումը, աշխատանքների համաձայնեցումը ներդրումներ և ջանքեր են պահանջում: Կառույցները տարբերվում են աշխատանքային մշակույթով, վարձատրության և առաջխաղացման համակարգերով: Սա հավանական է դարձնում ներքին դիմադրությունը, ինչպես նաև բախումները կազմակերպության ներսում և դրանց միջև: Ազդեցության մեծ անհամաչափություններն ազդում են գործընկերության ընթացքի վրա, ինչը կարող է ծնել թույլ կողմի կրավորական վարք: Խորհուրդ է տրվում հնարավորինս հավասարակշռել ազդեցության շահերը: Կազմակերպչական խնդիր է նշված բյուջետային գործընթացը գերազանցող պարտավորություններ ստանձնելու օրենսդրական սահմանափակումը կառավարության համար: Կառավարությունը չի կարող ստանձնել պարտավորություն որևէ մասնավոր ընկերության հաշվին կատարելու վճարումներ, որոնք կձգվեն ավելի երկար ժամկետով, քան բյուջետային գործընթացի տևողությամբ թույլտվածը:

Այս խնդիրների մի մասի լուծումը հնարավոր է Կոնցեսիայի մասին օրենքի ընդունումից և համապատասխան մարմնի ձևավորումից հետո: